

ԱՐՓԻԿ



491.99-8
m-45

92/5

Apr.

3-2603a

3-2603a

10 MAY 2010

Ա Ր Փ Ի Կ

111

191.99-8

S-45

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

ՀԱՅԱԽՍՍ ԵՒ ՕՏԱՐԱԽՍՍ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

20.5

ԶԱՄԱԹԻՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ ԵՒ ԳՐԵՆՈՒ ՏԱՐՐԱԿԱՆ ՎԱՐՇՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱԽԱՊԱՏՐԱՄՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔ

03019

ԿԱԶՄԵՅ Ն. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

ՊՈՒՅ. №21290

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան ՄԱ. Մարտիրոսյանցի, պուլ. փող. № 3.

1910

3 U R U Q U F U 6

Մեր գրքի վերնագիրը ցոյց է տալիս, որ սա կոչուած է միաժամանակ ծառայել հայախօս և օտարախօս հայ մանուկներին: Կազմել մի գասագիրքը բացառապէս օտարախօս հայ մանուկների համար՝ վերին աստիճանի լուրջ և դեռևս ուսումնասիրութեան կարօտ խնդիր է: Մենք աւելի համեստ ծրագիր ենք ընդունել. կարօտ խնդիր է՝ կազմել մի այբբենարան, որ պէթ մասամբ պիտիբ նպատակն է՝ կազմել մի այբբենարան, որ պէթ մասամբ պիտիտանի լինի և ձյն դպրոցներին, ուր սովորող մանուկները օտարախօս են:

Մայրենի լեզուի և խօսակցական—գրուցատրական լեզուի մէջ մենք որոշ տարբերութիւն ենք դնում: Օտարախօս հայ-մանուկների մայրենի լեզուն ևս մենք համարում ենք հայերէնը. իսկ նրանց գրուցատրական լեզուն—մի բարբառ, որով նրանք փոխանակում են իրանց մոքերը առօրեայ կեանքում, առանց մի բոլէ անգամ հրաժարուելու այն ներքին ինքնարուզիւ ձգտումից, որ նրանց մղում է դէպի մայր լեզուն: Վրացախօս կամ թուրքախօս հայ մանուկի համար հայոց լեզուն այն չէ, ինչ-որ վրացի մանուկի համար նոյն հայերէնը: Միւս կողմից վրացախօս, թուրքախօս կամ չէրքէզախօս հայ մանուկների վերաբերմունքը դէպի իրանց մայր-լեզուն, դէպի հայերէնը, բոլորովին համանման են, մինչդեռ վրացի, թուրք և չէրքէզ մանուկների վերաբերմունքը դէպի նոյն հայերէնը բոլորովին տարբեր: Օտարախօս հայը, չնայելով, որ նրա գրուցատրական լեզուն հայերէնը չէ, երբէք չէ դադարում սօցիալական և ժառանգական կապերով միացած միալ ազգի ընդհանուր զանգուածի հետ. հեռաւարտ այն հայերը, որոնց խօսակցական լեզուն հայերէնը չէ, իրանց մայր լեզուն սովորելու համար անելի լաւ պայմանների մէջ են, քան թէ մի այլ բոլորոհամար լեզու սովորելիս: Այս տեսակէտից մենք կարծում ենք, որ այս գրքոյից կարող պիտի լինի որոշ ծառայութիւն մատուցանել նաև օտարախօս հայ մանուկներին:

Որպէսզի մեր դասագիրքը պիտանացու լինի օտարախօս հայ մանուկներին ևս, մինք աշխատել ենք սրա սկզբի դասերի նիւթը

տանել բացառապէս միջազգային նշանակութիւն ունեցող բառերից: Այդպիսի բառեր մենք համարում ենք ծայնարկութիւնները, որոնք բոլոր լեզուներով միենոյն են: Երբ մանուկը մօտենում է դատարկ կարասին և ձայն է տալիս, նա պիտի իւր ձայնի անդրադարձութիւնը լսէ, միւնոյն է՝ հայախօս է՛նա, թէ թուրքախօս. երբ նա վայր է ընկնում կոտորուող ճղնից, նա ՎՅ պիտի գոչէ... Այսպէս էլ միւս ձայնարկութիւնների վերաբերութեամբ: Հարկաւոր է միայն, որ այդ ձայնարկութիւնների նշանադրերը պարզ լինին, ինչպէս պարզ են իրանք ձայնարկութիւնները: Այդ կողմից հայոց լեզուն տալիս է մի շարք դժուարութիւններ, որոնք, բարեբաղդաբար, անյաղթելի չեն. սկզբի դասերի համար այդ դժուարութիւնները ներկայացնում են ու և յ տառերը, որոնցից առաջինը պարզ հնչիւնի նշանագիր լինելով, պիտի ունենար մի պարզ գիր, մինչդեռ մեր այբուբենի մէջ ու բաղկացած է համարւում երկու տառից. իսկ յ, որ իսկզբանէ կիսաձայն է, այսօր կատարում է նաև բաղաձայնի պաշտօն, երբեմն մինչև իսկ համար է մնում: Միջազգային լեզուի (ձայնարկութիւնների) հնչիւններն արտայայտող այդ երկու գայթակղեցուցիչ գրերը հեշտութեամբ յարմարւում են մեր պահանջներին. ու-ի երկու մասերը մի մազային գծով շաղկապւում են միմեանց հետ (ինչպէս այդ լինում է գրելու ժամանակ) և այդպիսով ու պարզ հնչիւնի համար մենք ունենում ենք ու պարզ գիրը. անցնելով յ նշանագրին, մենք գիտենք որ նա գրագիտութեան սկզբին ունեցել է միայն մի հնչիւն և մինչև օրս պահում է իւր պատմական հնչիւնը, այսինքն համարւում է կիսաձայն ի կամ հնչւում է որպէս ոռոսական ы. Միայն այբբենական մասի վերջում մենք ստիպուած ենք հասկացնել մանուկներին, որ այդ կիսաձայն տառը բառի սկզբում կարդացւում է որպէս բաղաձայն հ. Կարելոր է, սակայն, որ այդ կիսաձայն յ-ն միշտ իրան նախընթաց ձայնաւորի հետ կարդացուի, նրանից անբաժան—որ՝ ալ, ույ, ոյ, էյ, օյ վանկերը դրագիտութեան սկզբում համարուին անբաժանելի հնչիւններ և գրեր:


Այսպէս անհ, մեր դասագրքի առաջին դասերը ձայնարկութիւններ են: Այդ ընդհանուրին մատչելի ու հասկանալի բառերից յետոյ, ամենամօտիկ և ամենաընտանի նիւթը, որ կարող է կապել օտարախօս հայ մանկանը իւր հայրենի լեզուի հետ, իրան 2ԲՊապատողներն ու մերձաւորներն անուններն են՝ հայ, հայր,

մայր, և այլն: Մենք աշխատել ենք զգուշութեամբ ու քայլ-առ-քայլ առաջ դնալ այս ուղղութեամբ: Ինքը դասագիրքը ցոյց է տալիս, թէ ինչպէս և որքան յաջող ենք լուծել մենք այդ խնդիրը: Մեր ճառը անձնաւորութիւնների և մօտիկ առարկաների անունները տալով որպէս նիւթ լեզուի ու գրագիրութեան, աստիճանաշարար աւանդում ենք մանուկներին այդ առարկաների քանակը, նրանց որպիսութիւնը, գործողութիւնը և, վերջապէս, առաջարկում ենք կապակից ընթերցանութեան համար պարզ նիւթեր: Մեր ցանկութիւնն էր դնել սկզբի գոտերի մէջ պատահող բոլոր նիւթական առարկաների պատկերները, որոնք շատ կընպաստէին օտարախօս հայ մանուկներին. տարբարագաւոր այդ մեզ չյաջողուեց. կըմնայ խնդրել ուսուցիչներին, որ նրանք աշխատեն առարկաների իսկականը ցոյց տալ մանուկներին, երբ այդ հնարաւոր է: Վայելուչ գրութիւնը մենք ինքնուրոյն և անկախ առարկայ ենք ընդունում, այդ պատճառով այս դասագրքի սկզբում տալիս ենք միայն մի-մի տառ և վերջումը դնում ենք ամբողջ այբուբենը: Ուսումնարանը վայելչագրութեան համար պիտի ունենայ առանձին գոտեր, անկախ լեզուի գոտերից: Գրաւոր վարժութիւնները, որոնք երկու նպատակ ունին, ուղիղ գրել, և վայելուչ գրել, պիտի յաջորդեն և ոչ նախորդեն տպագիր վարժութիւններին, մանաւանդ օտարախօս հայ մանուկներին ուսուցանելիս:

Անշուշտ խօսք կը լինի, թէ ինչպէս կարող է միեւնոյն նիւթը միաժամանակ պիտանի լինել հայախօս և օտարախօս հայ մանուկներին, այն էլ միեւնոյն ծաւալով: Մենք այդ չենք պնդում. նիւթը, որ մենք առաջարկում ենք, ըստ մեզ, մատչելի է բոլոր մանուկներին, որոնց աչքի առաջ ենք ունեցել. իսկ ծաւալը, անկասկած, տարբեր կըլինի. հայախօս մանուկների համար մեր առաջարկած նիւթը կարող է սակաւ լինել, որպէս մի տարուայ պաշար, իսկ օտարախօսները եթէ մի տարումը ամբողջ նիւթը չանցնեն, ո՞վ կարող է մեղադրել մանուկներին կամ նրանց ուսուցչին:



40783-63



ա ո ու

III O III
III O III

ա ո ու



այ

այ

այ, այ, այ,
օյ, օյ, օյ,
ույ, ույ, ույ,

այ, այ, այ,
ույ, ույ, ույ,
օյ, օյ, օյ,



էյ

էյ

էյ, էյ. այ, այ. օյ, օյ. ույ, ույ.
էյ-էյ-էյ. այ-այ-այ. օյ-օյ-օյ. ույ-ույ-ույ.



վայ

վայ

վայ, վայ, վայ. վույ, վույ, վույ.
էյ, այ, վայ, վույ, օյ, ույ.

ս

*)

ս

ա. սա. ու. ուս. օ. օս. սուս. սօս. աւա.

սազ


սազ

օլ է. սա է. սա օլ է.
այս. այս է. այս սազ է.

*) Սազի ձայնը մանկան վախեցնելիս:




հայ



այ, ահ. օյ, օհ. էյ, էհ. վայ, վահ.
 ան, ահ. օյ, օհ. էյ, էհ. վան, վահ.
 ան, ահ. օյ, օհ. էյ, էհ. վան, վահ.


այս օվ է. սա օվ է. սա հայ է.
 այս սազ է. հավ է. հօվ է. սօվ է.

հայր




սա. սար. սուր. սազ. ուս. սուս.
 օվ է. օվ է սա.
 սա հայ է. սա հայր է.
 օվ էր. օվ էր սա.
 սա հայ էր. սա հայր էր.
 այս, օր. այսօր. այսօր հօվ է.

մայր





հայ. հայր. մայր.
 ուս. սուս. սար.

մի մայր




մի. միս. մաս. մի սար. մի սազ.

մէկ մայր



մօմ. սուր. հուր-կրակ.
 մէկ հայ. մէկ հայր. մէկ մայր.

մա ն ուկ



օվ է. հայ է, հայր է, մայր է, կին է.
 օվ էր. մի հայ էր, մի հայր էր, մի մայր էր, մի կին էր.
 օվ կա. մէկ հայ կա. մէկ հայր կա. մէկ մայր կա. մէկ կին կա.
 օվ կար. մէկ հայ կար. մէկ հայր կար. մէկ մայր կար.

ունիմ. մայր ունիմ. մէկ մայր ունիմ.
 ունիս. հայր ունիս. մէկ հայր ունիս.
 ունի. կին ունի. մէկ կին ունի.

օվ ունի.

նա ունի.

նա ունի մանուկ.

նա ունի մի մանուկ.

նա ունի մի սիրուն մանուկ.

օվ ունէր.


նա ունէր.

նա ունէր սագ.

նա ունէր մէկ սագ.

նա ունէր մէկ սիրուն սագ.

ծիծ




այծ. ծամ.

ծի-րան.



այծ, մի այծ. ծամ, մի ծամ. ծիրան, մի ծիրան.
 ունիմ. այծ ունիմ. ծամ ունիմ. ծիրան ունիմ.
 ունիս. ծիծ ունիս. կուրծ ունիս. ծունկ ունիս.
 ունի. մի այծ ունի. մի ծամ ունի. մի ծիրան ունի.

ծրծ մայր



ծիծ-ծիծը. այծ-այծը. ծամ-ծամը. ծիրան-ծիրանը.
 հայ-հայը. հայր-հայրը. մայր-մայրը. կին-կինը.

Ժրծում է.

մանուկը ժրծում է.

մանուկը ժրծում է ծիծ.

մանուկը ծիծ է ժրծում.

այս մանուկը ծիծ է ժրծում.

օվ է. նա է. օվ էր. նա էր.

օվ կա. նա կա. օվ կար. նա կար.

օվ ունի. նա ունի. օվ ունէր. նա ունէր.

օվ է ժրծում.

նա է ժրծում.

օվ էր ժրծում.

նա էր ժրծում.

մանուկը ժրծում է.

մանուկը ժրծում էր.

մանուկը ժրծում էր ծիծը.

մանուկը ժրծում էր մօր ծիծը.

մանուկը ժրծում էր ծրծմօր ծիծը:

ա. օ. ու. յ. է. ը. ի.

Ա. Օ. Ու. Յ. Է. Ը. Ի.

վ, վ. ս, Ս. գ, Գ. հ, Հ. ը, Ը. մ, Մ. կ, Կ. ն, Ն. ծ, Ծ.

ՀՕՀ



—
—
—
—
—

հա. չէ.

օվ. ի՞նչ.

Սա օվ է:

Սա մի մանուկ է:

Սա մի չար մանուկ է:

Մանուկն ի՞նչ է անում:

Մանուկը չօշ է անում:

Մանուկը ի՞նչ էր անում:

Մանուկը չօշ էր անում:

Ունիմ-չունիմ. ունիս-չունիս. ունի-չունի:

Օվ ունի:

Մանուկն ունի:

Մանուկն ի՞նչ ունի:

Մանուկն ունի գրրիչ:

Օվ չունի:

Մանուկը չունի:

Մանուկն ի՞նչ չունի:

Մանուկը գրրիչ չունի:

օվ. ինչ. ում.

Սա օվ է: Սա հայր է:

Սա ում հայրն է:

Սա իմ հայրն է:—Հայրըս է:

Սա ի՞նչ է:

Սա գրիչ է:

Սա ում գրիչն է:

Սա իմ գրիչն է:—Գրիչըս է:

Ծրծում-է. ծծում-չէ. չէ-ծծում. չի ծծում.

Գրում-է. գրում-չէ. չէ-գրում. չի գրում.

Ասում-է. ասում-չէ. չէ-ասում. չի ասում.

Անում-է. անում-չէ. չէ-անում. չի անում.

Մանուկը ծծում-էր—ծծում-չէր—չէր-ծծում:

Հայրըս գրում-էր—գրում-չէր—չէր-գրում:

Մայրըս ասում-էր—ասում-չէր—չէր-ասում:

Ծրծմայրը անում-էր—անում-չէր—չէր-անում:

Մանուկը ծծում էր ծիծ:

Մանուկը ծծում-չէր ծիծ:



Մանուկը ծիծ չէր ծծում:

Հայրս գրում-էր նամակ:

Հայրս գրում-չէր նամակ:

Հայրս նամակ չէր գրում:

Երկու մարդ



մի սանդ

մի վարդ.

մի սարդ

Երկու հայ. Երկու հայր. երկու մանուկ:

Օվ է այս մարդը:

Այս մարդը իմ հայրն է.

Սա իմ հայրն է. սա հայրըս է:

Օվ էր այդ կինը:

Այդ կինը իմ մայրն էր:

Դա իմ մայրն էր. դա մայրըս էր:

Օ՞վ էր այն մանուկը:

Այն մանուկը իմ ընկերն էր:

Նա իմ ընկերն էր. ընկերս էր:

Ես. դու. նա. սա. դա. նա. այս. այդ. այն.
 Ես-եմ. ես-չեմ. ես մարդ-եմ. ես մարդ-չեմ.
 Դու-ես. դու-չես. դու կին-ես. դու կին-չես:
 Նա-է. նա-չէ. նա մանուկ է. նա մանուկ չէ:
 Այդ է. այդ չէ. այդ վարդ է. այդ վարդ չէ:

Օ՞վ ասի. օ՞վ չասի:

Դու ասան. դու մի՛ ասիր:

Դու ասան դասըդ. դու մի՛ ասիր դասըդ:

Դու դասըդ մի՛ ասիր:

Օ՞վ անի. օ՞վ չանի:

Դու արա. դու մի՛ անիր.

Դու կար արան. դու կար մի՛ անիր:

Ես ռանիմ մի սանդղ:

Դու ռանիս երկու վարդ:

Մանուկը չռանի ոչ-մի գրիչ:




պապ

պ

պառ. պանիր. կապիկ.

տա տ

տ



արտառ



տուն



կատու




թ օ ու ը

թ

ու



թի



թաթ




թաս

դուր, դուռ. սար, սառ. բուս-ուսս.
դուռ-դուռը. նուռ-նուռը. գառ-գառը.
ծանրը դուռը. թրթու նուռը. կարմիր գառը.

պապ, պապիկ. տատ, տատիկ. մայր, մայրիկ. հայր, հայրիկ.
ծեր, ծերուկ. հօրթ, հօրթուկ. գառն, գառնուկ. ծառ, ծառուկ.
կին, կնիկ. մանուկ, մանկիկ. թօռն, թօռնիկ.

հայր, հայրիկ, այ հայրիկ. մայր, մայրիկ, այ մայրիկ.
կին, այ կին, այ կնիկ. մանուկ, մանկիկ, այ մանկիկ.
պապի, պապիկ. այ պապի, այ պապիկ. այ տատի.



Կատուն մըսին չըհասավ,
Այսօր հօ պատէ, ասավ:

— Օ՞վ չըհասավ:

— Օ՞վ ասավ:

— Կատուն չըհասավ:

— Կատուն ասավ:

— Կատուն ինչի՞ն չըհասավ:

— Կատուն ի՞նչ ասավ:

— Կատուն մըսին չըհասավ:

— Կատուն ասավ:

Այսօր պատ է:

միս. մսի կտօր. մսին չը հասավ. մսից կերակուր.
մսով կերակուր:



շուՆ

շ

նուշ-նուշը. շուշան-շուշանը.
անուշ, դառը, թրթռ, կծու.
շուտ, ուշ, շատ, վատ.

Անուշն ուտում է անուշ ծիրան:
Ճուշանը ունի սիպտակ շուշան:
Սիմօնը պօկում է թթու կեռաս:
Վարդանը ուտում է կծու պանիր:
Սահակը կօտրում է դառը նուշ:
Հայրս առնում է կարմիր գինի:

Դու շուտ գնա:

Դու շուտ գնա տուն:

Նա ուշ է գնում դասատուն:

Սարգիսը շատ է կարդում:

Արամը վատ է գրում:



հաց

հ

հաց, հացը. ցին, ցինը. կացին, կացինը. ցօրենը:
հին հացը. չար ցինը. սուր կացինը. նօր ցօրենը:
կարմիր վարդը. սառը կաթը. թաց շօրը.
այս աշակերտը. այդ մանուկը. այն շուշանը.

Ես գնացի դպրօց:

Այսօր ես գնացի դպրօց:

Այսօր ես շուտ գնացի դպրօց:

Դու եկար տուն:

Երեկ դու եկար տուն:

Երեկ դու ուշ եկար տուն:

Նա կրմնա այգիում:

Էգուց նա կը մնա այգիում:

Էգուց նա երկար կը մնա այգիում:

ծծում-եմ, ծծեցի, կըծծեմ ծիծ.

ասում-եմ, ասացի, կ'ասեմ դասըս.

անում-եմ, արեցի, կ'անեմ գօրծըս:

կարդում-եմ, կարդացի, կըկարդամ նամակ.

տանում-եմ, տարա, կը տանեմ հաց.



Անուշի շունը

Անուշը կանչեց իր շանը,
 Անուշը ցույց տուեց շանը
 մի նամակ,
 Անուշը ասեց.
 «Ապա, սիրուն շնիկ,
 դու կարդա,
 ես տեսնեմ.
 ինչ է գրած այս
 նամակում»:

Շունը հօտօտեց նամակը,
 շունը նայեց Անուշի երեսին,
 շունը ասեց.

Ես գիր չեմ կարդում.
 Ես պահպանում եմ հօրըդ տունը.
 Վօր չար մարդիկ վօշինչ չըտանեն:

Անուշը կանչեց իր շանը, ցույց տուեց մի
 նամակ եվ ասեց. «Ապա, սիրուն շնիկ, կարդա,
 տեսնեմ՝ ինչ է գրած այս նամակում»:

Շունը հօտօտեց նամակը, նայեց Անուշի
 երեսին եվ ասեց. Ես գիր չեմ կարդում. Ես
 պահպանում եմ հօրըդ տունը, վօր չար մարդիկ
 վօշինչ չը տանեն:

Անուշն ի՞նչ արեց:
 Անուշը կանչեց.
 Անուշը ցույց տուեց,
 Անուշն ասեց:
 Անուշն համ կանչեց:
 Անուշը կանչեց շանը:
 Անուշը համ շանը կանչեց:
 Անուշը կանչեց իր շանը:
 Անուշը ի՞նչ ցույց տուեց:
 Անուշը ցույց տուեց նամակ
 Անուշն ի՞նչ ասեց:
 Անուշն ասեց՝

ապա, սիրուն շնիկ,
 դու կարդա,
 ես տեսնեմ՝
 ինչ է գրած այս նամակում:

Շունը ի՞նչ արեց:
 Շունը հօտօտեց.
 շունը նայեց.
 շունը ասեց:

Շունը ի՞նչ հօտօտեց:
 Շունը հօտօտեց նամակը:

Շունը ինչի՞ն նայեց:
 Շունը նայեց երեսին:

Շունը համ երեսին նայեց:



Շունը նայեց Անուշի երեսին:

Շունը ի՞նչ ասեց:

Շունը ասեց՝

Ես գիր չեմ կարդում.
 Ես պահպանում եմ հօրըդ տունը.
 Վօր չար մարդիկ վօշինչ չըտանեն:

երեք տղա




մէկ տղա. երկու տղա. երեք տղա.
այս տղան. այդ տղան. այն տղան.
իմ տղան. քու տղան. նրա տղան.

ես-մենք. դու-դուք. ինքը-իրանք.
սա-սրանք. դա-դրանք. նա-նրանք.
մենք ունինք. դուք ունիք. իրանք ունին.
սրանք ունին. դրանք ունին. նրանք ունին.

Մենք գնում ենք տուն, դպրոց, դաշտ:
Դուք գնում էք գիրք. քանոն, թանաք:
Մենք գնացինք տուն, դպրոց, դաշտ:
Դուք գնեցիք մատիտ, տետրակ, գրիչ:
Սրանք կըգնան.
Նրանք կըգնեն.


խաղ




երեք տղա խաղում են.
երեք տղա խաղ-են-անում.
մենք աղում ենք ցօրեն ու զարի.
դուք աղում էք միսն ու պանիրը.
դուք աղ էք անում մսին ու պանրին.
նրանք աղացին ցօրենը. նրանք աղեցին միսը.
նրանք աղարին մսին. նրանք աղ դրին վարունգը:

միս, մսի, մսին, մսից, մսով.
պանիր, պանրի, պանրին
վարունգը :

հօլ



հօլի խաղալ, վէգի խաղալ, տիկնիկի խաղալ.
գօրծել, գօրծ անել. խօսել, խօսք ասել. սլարել,
սլար գալ, սլար ածել. ման գալ, ման ածել.
սլտրտել, սլտուտ գալ, սլտուտ տալ, սլտտացնել.



Կատուն խաղ է, մրկանը մահ է.

Կատուն մտավ հացի տաշտը.

Կատուն տաշտի մէջ կռտապ եկավ-պառկեց:

Մկները կատուն պանիր կարծեցին.

մկները մէկ-մէկ մօտ էին գալիս տաշտին:

Կատուն թաթը մէկնում էր.

կատուն կախում էր մկներին.

կատուն խեղդում էր մկներին:

Մայր-մուկը հասկացավ վտանգը.

մայր-մուկը մօտեցավ տաշտին.

մայր-մուկը նայեց պանիրին.

— Ի՞նչ պանիր — չար կատուն էր տաշտի մէջ:

Մայր մուկը գնաց.

մայր-մուկը իմաց արեց ամենքին:

Կատուն մտավ հացի տաշտը եվ նրա մէջ
կռտապ-եկավ, պառկեց: Մկները պանիր կարծե-
ցին նրան. մէկ-մէկ մօտ էին գալիս տաշտին.
Կատուն էլ թաթը մէկնում էր, կախում էր նրանց
ու խեղդում:

Մայր-մուկը հասկացավ վտանգը. նա մօտե-
ցավ տաշտին ու նայեց պանիրին: Ի՞նչ պանիր.
չար կատուն էր տաշտի մէջ: Մայր-մուկը գնաց,
իմաց արեց ամենքին:

տաշտ-դաշտ. կռտապ—գիրօդ. կռտապ գալ—կռտապի
պէս կըծկուիլ, ծալուիլ:

Կատուն մտավ հացի տաշտը.

Օ՞վ մտավ:

Կատուն մտավ:

Կատուն ի՞նչ արեց:

Կատուն մտավ:

Ո՞ւր մտավ կատուն:

Կատուն մտավ տաշտը:

Կատուն վճր տաշտը մտավ:

Կատուն մտավ հացի տաշտը:

Նրա մէջ կռտապ եկավ-պառկեց.

Օ՞վ կռտապ-եկավ-պառկեց:

Կատուն կռտապ եկավ-պառկեց:

Կատուն ի՞նչ արեց:

Կատուն կռտապ եկավ-պառկեց:

Կատուն վճրտեղ կռտապ եկավ-պառկեց:



Կատուն նրա մէջ կռտապ եկավ-պառկեց:

մկները պանիր կարծեցին նրան.

• • • • •



ճու



սիպտակ ձու. կարմիր ձու. տեղին ձու. կապուտ ձու.
կարմիր ձի. սեւ ձի. դեղին ձի, չալ ձի, գորշ ձի.
սեւ օձ, չալ օձ. գորշ օձ. շէկ օձ. կանաչ օձ.

մէկ տանձ, երկու տանձ, երեք տանձ, չորս տանձ.

առաջին, երկրորդ. երրորդ, չորրորդ ձուկը.


մեր ձիու սանձը. ձեր ծառի տանձը. նրանց ձեռի գանձը.

զատիկ



Չատիկ էր. երեկոյեան զանգը տալին. մա-
նուկները հավաքուել էին եկեղեցու դուռը. ամեն
մի երեխա ձեռին ներկած ձու ռնէր. խաղում
էին-ձառի էին տալիս. ում ձուն կօտրում էր, նա
տանուլ էր տալիս. ում ձուն սաղ էր մընում, նա
տանում էր: Վերջը մանուկները սկըսեցին կօտ-
րած ձուերով խաղ անել, ձու գլօրել:

կարմիր ձուն զատիկին կը սաղա.
տարին մի զատիկ, այն էլ նավակատիր.



Վօզնին եւ Յօզն

Յօզն տեղ էր ընտրել ծառի խօռօշում.

օձը նընջում էր խօռօշի մէջ:

Ծառին մօտիկ ապրում էր մի վօզնի:

Մի մարդ ուզեց սպանել վօզնուն:
 Վօզնին խնդրեց օձին:
 Օձը ներս ընդունեց վօզնուն:
 Մարդը հեռացավ:
 Օձը ասեց վօզնուն.
 ընկեր, տեղս նեղ է.
 ասեղներդ ծակօտում են լինձ.
 դուրս գնա այս տեղից:
 Վօզնին զայրացավ.
 վօզնին ասեց.
 դու համարձակվում ես.
 հիմա ես քեզ ցոյց կըրտամ:
 Օձը հասկացավ վօզնու չար միտքը.
 օձը ինքը դուրս գնաց իր տեղից:

Օձը տեղ էր ընտրել ծառի խօռօչում եւ նրա մէջ
 նընջում էր: Ծառին մօտիկ ապրում էր մի վօզնի: Մի
 մարդ ուզեց սպանել վօզնուն: Վօզնին խնդրեց օձին: Օձը
 ներս ընդունեց վօզնուն: Մարդը հեռացավ: Օձը ասեց
 վօզնուն. ընկեր, տեղս նեղ է. ասեղներդ ծակօտում են
 լինձ. դուրս գնա այստեղից: Վօզնին զայրացավ եւ ասեց.
 դու համարձակվում ես. հիմա ես քեզ ցոյց կը տամ: Օձը
 հասկացավ վօզնու միտքը, ինքը դուրս սողաց իր տեղից:

օձ, օձի, օձին, օձից, օձով:
 վօզնի, վօզնու, վօզնուն, վօզնուց, վօզնով.
 ընտրում եմ, ընտրեցի, ընտրել եմ.



աղջիկ

2

մէկ, երկու, երեք, չորս աղջիկ.
 առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ աղջիկը.
 սիրուն, տգեղ, պառտով, ջահել աղջիկ.
 իմ, քու, մեր, ձեր, նրանց աղջիկը.

Երեք աղջիկ գալիս էին դպրոցից. վատ եղանակ էր. անձրև էր գալիս: Աղջիկներից մինը հօվանոց ունէր-շատ մեծ հօվանոց: Մանուկները մտան հօվանոցի տակ եւ ուրուխ-ուրախ առաջ գնացին:


գալիս-եմ, գալիս-ես, գալիս է, գալիս ենք...
գալիս էի, գալիս էիր, գալիս էր. գալիս էինք...
եկա, եկար, եկավ, եկանք, եկաք, եկան.
լալիս եմ... լաց եմ լինում...
լալիս էի... լաց էի լինում...
լաց եղա, լաց եղար, լաց եղավ, լաց եղանք...
մարդ է գալիս, անձրեւ է գալիս. քամի է գալիս...

հարս ու փեսա




սկապ. տատ. հայր. մայր. տղա. աղջիկ.

ճօճ



Մանուկը քնած է ճօճի մէջ. մանուկի ճակատը բաց է. ճանճերը կծում են երեխային: Երեխայի ճակատին գցում են բարակ խաւ:

Փայտօն



Ճօճի մօտ դրած է մի փայտօն—փոքրիկ, մանկական ֆայտօն: Մանուկը կրդարթնի. նրան կրղնեն ֆայտօնում, կարմիր ֆէսը կրծածկեն գլխին եւ փայտօնը կըքաշեն դէպի տուն:

Ես մի ճանճ եմ.
Ես մի փոքրիկ ճանճ եմ.
Ես մի զուարճասէր ճանճ եմ:
Ես թռչում եմ դէպի վեր.
Ես թռչում եմ դէպի վար.
Ես թռչում եմ մի հօվտանմէջ.



n p p p

Խաչ-քարի առաջ
կանգնած է մի
աղջիկ:

որը է այդ աղջիկը-
հայր ու մայր չունի:
ոտաբոբիկ է նա-
ոտնաման չունի.
պատառոտած են
շորերը-նոր հալա-
չունի:

Որքը աղօթք է
անում,
որ մի բարի մարդ
ընդունի իրան,
պահի, պահպանի:

Կարմիր արեւը արդէն մայր մը պաւ,
Լուսինը վաղուց գնաց, թաք կացաւ.
Մանրիկ աստղերը ամպի տակ մըտան
եւ ցուրտ ու խաւար գիշեր էր աշնան:
Անտէր, անպաշտպան, տկլոր ու քաղցած,
Որքն աղօթում է խաչ-քարի առաջ:

Եղբայր



p n j r

Հինգ եղբայր, վեց եղբայր, եօթն եղբայր...
 Հինգ-երորդ, վեց-երորդ, եօթն-երորդ եղբայր...
 Թույլ-թույլ, ծույլ-ծույլ, բույս-բույս, յույս-յույս.



paŋ, ŋa, paŋa, paŋa, uŋ. Muppaŋ.

f g u y, w u y, u y, f u y, h u y, u y

Քոյր ու եղբայր իջան պարտէզ՝ խաղ անելու. եղբայրը պըտ-տացնում էր հոլը. քոյրը խաղում էր տիկնիկով:

— «Դու ինձ խանգարում-ես, Սաթօ, հոլիս առաջն ես ընկնում», ասեց եղբայրը:

— Դու ես ինձ խանգարում. մտրակիդ ծայրով դիպչում ես տիկնիկիս. բաշուիր այն կողմը:

Մանուկները հեռացան իրարից. նրանք սկսեցին ջոկ-ջոկ խաղ-անել, բայց շուտով տըխրեցին ու ետ գարձան տուն:

Քոյրն իջաւ պարտէզ.

եղբայրն իջաւ պարտէզ.

նրանք իջան պարտէզ...

ու — ու

մեղու, մեղուի, կատու, կատուի, Բաքու, Բաքուի.

Ա ե հաւ, հաւ, հաւաս, հաստաւ, հաս

Տ Տ Տ, ո հաւ, տաւ, հիւսաւ, տաւուց

յ յիւն, հաւ, յիւ, յաւ, յաւնի, յաւիտ

Մ ե դ ու

Ամենայն օր ես գնում եմ դաշտ,

Ամենայն օր ես գնում եմ ձոր,

Գնում եմ գարնանը,

Գնում եմ ամառը.

Ես անվերջ աշխատում եմ.

Ծաղիկների մէջ մեղր եմ պտուռ.

Գտածս իսկոյն տանում եմ փեթակ.

Որ-երբ ցուրտ քամին փչէ,

Երբ ծաղիկները թառամին,

Ես ձմեռը պաշար ունենամ,

Բոլորովին ապահով լինիմ:

Գարուն, ամառ, ամեն օր

Ես գնում եմ դաշտ ու ձոր,

Աշխատում եմ ես անվերջ,

Մեղր եմ պտուռում ծաղկանց մէջ,

Եւ գտածս ես շիտակ

Իսկոյն տանում եմ փեթակ,

Որ երբ փչէ ցուրտ քամին,

Ծաղիկները թառամին,

Ես ձմեռը պաշարով

Լինիմ իսպառ ապահով:





Ժ ա մ

—
—
—

Ժամի դռան դողդողալով
կանգնած է մի աղքատ կին.


Ժամ, ժամաւոր, ժամասէր, ժամակոչ.
Ժամ, ժամագործ, ժամանակ. ժամացոյց.

Նորա հանգերձ պատառ-պատառ,
չունի շապիկ իւր հագին:

իւր—իւր. հիւր—հիւր. ալիւր—ալիւր.
արիւն. առիւծ. աղբիւր. անիւս. հիւր. հիւս.
եվ-եւ-և. արեւ-արև. բարեւ-բարև. տերեւ. տերև.

Ժ. ամ, Ժ. ամբողջ, Ժ. ամբողջ, Ժ. ամբողջ, Ժ. ամբողջ.

Ժ. ամբողջով ամբողջ պատգամաւոր է.



Առիւծն ու մուկը

I. Մուկը բուն էր շինել առիւծի որջի մօտ և
նրա մէջ ապրում էր: Այդ բանը դուր չէր գալիս
առիւծին. նա ուզում էր մկանը ջարդել:

— Ինձ մի ջարդիր, տէր, թող ապրեմ քեզ
մօտ. ձեռքիցս եկած լաւութիւնը կանեմ քեզ,
ասում է մուկը:

Առիւծը ժպտում է. ի՞նչ լաւութիւն կարող
է անել ինձ այս ողորմելին, մտածում է նա:


II. Մարդիկ թակարդ են սարքում և
առիւծին բռնում են: Թակարդի հաստ թոկերը
պինդ սեղմում են նրան: Առիւծն սկսում է
մոնչալ: Մուկը լսում է առիւծի մոնչոցը, մօտ է
վազում, իւր սուր ատամներով կռծոտում-կտրա-
տում է թոկերը և ազատում է առիւծին:

մուկը-մուկն. մկան բռնը. մկանը ջարդել,
առիւծ. առիւծի որջը. դուր չէր գալիս առիւծին.
կռծել, կռծոտել. կտրել, կտրատել. պոկել, պոկոտել:

հերկք, որչափ գետի մօտ
որդեր կերաք դուք տղմոտ.
գնանք-գնանք դէպի տուն.
ձեզ կուտ կրտամ իրիկուն:

2. Առարկայի մէկը և շատը

շուն-շուն էր, շաներ-շ'ներ.
տուն, տուն էր, տաներ-տ'ներ.
ձուկը, ձուկն էր, ձուկներ-ձ'կներ.
դուռն, դուռն էր, դուռներ, դ'ռներ.



Ազահ շունը

Կամուրջի տակից պարզ ջուր էր. վազում:
Մի շուն անցնում էր կամուրջով: Զունը բերանին

մի կտոր միս ունէր: Վերեւից նայեց ջրին: Ջրի
մէջ տեսաւ մի ուրիշ շուն. սա էլ բերանին միս
ունէր: Զունը ցած թռաւ կամուրջից. ուզեց միւս
շանից խլել մսի կտորը: Բայց ջրի մէջ նա ուրիշ
շուն չըզտաւ. իրան բերանի կտորն էլ վեր
գցեց, ջուրը տարաւ: Զունը իւր պատկերն էր տե-
սել ջրի մէջ: Աչքածակ էր մեր շունը և պատիժն
էլ առաւ:


3. Առարկայի մէկը և շատը

մէկ շուշան, մէկ շուշան էր, շատ շուշաններ.
մէկ դանակ, մէկ դանակ էր. շատ դանակներ.
մէկ մկրատ, մէկ մկրատ էր. շատ մկրատներ.
մէկ դպրոց, մէկ դպրոց էր. շատ դպրոցներ.
մէկ աշակերտ, մէկ աշակերտ էր. շատ աշակերտներ.

Հաւն ու ցինը

Հաւը ձագերն առաւ և գնաց աղբանոցը քը-
ջուջ անելու: Այդ ժամին ցինը ման էր տալիս
օդի մէջ: Մայրը տեսաւ ցինին և ձայն տուեց
ձագուկներին.

ջո՛ւ-ջո՛ւ, ջո՛ւ-ջո՛ւ, իմ ձագուկն եր,
լաւ վառիկն եր, աքլարիկն եր.
եկէք, մըտէք թեիս տակը,
շատ հեռու է հայր-որձակը.
չար ուրուրը ման է տալիս,
օյ-օյ, ո՞նց է պտուտ գալիս:



Ձագերը հասկացան, որ վտանգ կա, վագե-
ցին, մտան մօր թևի տակ: Բայց մի ձագուկ
ականջ չարեց մօր ձայնին: Յինը վրա-տուեց, ճան-
կերի մէջ առաւ նրան և տարաւ, անուշ արաւ:

զնաց քջուջ անելու-զնաց որ քջուջ անի.
ման-տալ. ման եմ տալիս. ման էի տալիս.
ման-գալ. ման եմ գալիս. ման էի գալիս.
պտուտ-գալ. պտուտ եմ գալիս. պտուտ էի գալիս.
մայր. մօր թևը. մօր թևի տակ. մօր ձայնին.
վրա-տալ. վրա-տուեց ձագին.
ճանկ եր. ձագ եր. ձագուկներ. վառիկներ...

4. Առարկայի մէկը և շատը

մի մատանի, շատ մատանիք, շատ մատանիներ.
մի աղանի, շատ աղանիք, շատ աղանիներ.
մի քահանա, շատ քահանայք, շատ քահանաներ.
մի երեխա, շատ երեխայք, շատ երեխաներ.

Կաղնի ծառը և եղէգը



Անտառի մօտ մենակ կանգնած էր մի հսկա
կաղնի: Ծառին մօտիկ դուրս էր եկած մի հա-
մեստ եղէգնի: Կաղնի ծառը շարունակ ծաղ-
րում էր եղէգնուն. դու անգօր ես, ասում էր.
քամին քեզ կռացնում, գետնին է կպցնում. իսկ
ես միշտ կանգնած եմ ուղիղ և քամուց չեմ վա-
խենում:

Մի օր էլ սաստիկ քամի վեր-կացաւ: Եղէգնին

ծալուեց, գետնիցը կալաւ. իսկ կաղնին արմատից
պոկուեց, վայր-ընկաւ: Քամին անց-կացաւ: Ե-
ղէզնին նորից կանգնեց, նայեց կաղնուն ու ասեց.
«Ով հպարտանա, նա կը չքանա»:

կանգնած էր

ԲՆՆՂ. մի կաղնի կանգնած էր.

ԲՆՆՂԻՍԻ. մի հսկա կաղնի կանգնած էր.

ՌՐՈՒԵՂ. անտառի մօտ մի հսկա կաղնի կանգնած էր.

ԲՆՆՂԵՍ. անտառի մօտ մեծակ կանգնած էր մի հսկա
կաղնի:

ԴՐԱՐԱ էր եկած.

ԲՆՆՂ. դՐԱՐԱ էր եկած մի եղէզնի.

ԲՆՆՂԻՍԻ. դՐԱՐԱ էր եկած մի համեստ եղէզնի.

ՌՐՈՒԵՂ. ծառին մօտիկ դՐԱՐԱ էր եկած մի համեստ եղէզնի:

Ծաղրում էր.

ԲՆՆՂ. ծառը ծաղրում էր.

ՌՐ ԾԱՌՐ. կաղնի ծառը ծաղրում էր.

ԲՆՆՂԵՍ. կաղնի ծառը շարունակ ծաղրում էր.


ԲՆՆՂԻՆ. կաղնի ծառը շարունակ ծաղրում էր եղէզնուն. *).

կաղնի, կաղնու, կաղնուն, կաղնուց. կաղնիք-կաղնիներ.
եղէզնի, եղէզնու, եղէզնուն, եղէզնուց. եղէզնիք-եղէզնիներ.
քամի, քամու, քամուն, քամուց... քամիք-քամիներ.

*) Այսպէս հարցերով վերլուծել բոլոր նախադասութիւն-
ները. հարցերը տալ ընդարձակ ձևով և պատասխանները
պահանջել լիակատար և ոչ հատիկ-հատիկ բառերով:



յօպօպ



հարկ-տուրք, պէտք.

յարկ-կտուր, ծածկ.

հարթ-տափակ, տա-
փարակ.

յարդ-ծղօտ, վարման.

համր-խուլ, ականջը
ծանր.

յամր-դանդաղ, կամաց
համար-բանի համար,
մէկի համար.

յամառ-կամակոր, իր
ասածի մարդ.

Յ օ պ օ պ ր

Յօպօպը ձու պիտի ածէր, որ ձագեր հանէր,
բայց բուն շինել չըզիտէր: Նա մի պատրաստի
բուն գտաւ, ձու ածեց, որ թուխս նստի: Միւս
օրը յօպօպն զգաց, որ բունը հոտում է. գնաց,
ուրիշ բուն գտաւ: Զատ չանցած, այդ բնից էլ
սկսեց վատ հոտ գալ:

—Այս տեղի թռչունները, երևի, հոտած են,
ասաց յօպօպը. թռչեմ-գնամ ուրիշ աշխարհ:

—Գնա՛, ասաց ագռաւը. բայց աշխատիր
բնութիւնդ փոխել, ոչ թէ բունդ. կեղտահոտը
նրանից է, որ դու մաքրասէր չես:

ձու ածել՝ հաւը ձու է ածում.
ջուր ածել, թէյ ածել, սուրճ ածել.
փող ածել, սրինգ ածել, դաշնակ ածել.
հանել, որ հանէ, որ հանէր.
նստիլ, որ նստի, որ նստէր.

Չայնաւոր տառեր՝ ա, օ, ու, է, ի, ը, ե, իւ, եօ,
Կիսաձայն տառ յ՝—այ, էյ, օյ, վայ, թէյ.

» » հայր, մայր, եղբայր.

» » քույր-քոյր, ծոյլ, բոյն,

Բաղաձայն յ՝ յարկ, յիսուն, յետոյ.

Անձայն յ՝ ծառայ, քահանայ, երեկոյ.

ու—իւ—ուէ—ուե—ուա

ալիւր. արիւն. աղբիւր. աղաւէս. պատուէր. արուեստ.
ստուեր. առուակ.

Ես շատ եմ սիրում, երբ ձիւն է գալիս, տաք հագ-
նըւում եմ, բազն եմ վազ տալիս, ընկերներին հետ ձնա-
գունտ խաղում, ազատ թռչկոտում, խնդում, ծիծաղում.
Բայց, ան, աշխարհում կան բիւր մանուկներ, որոնք բո-
բիկ են, չունին տաք շորեր:



Ա դ ու է ս ր

Աղաւթը պառկեց աղբի տակին,
Աչքը գցեց հաւի ձագին,
Նետով կրտամ աչքի տակին,
Որ մօտ չըգայ նա մեր բազին:

եա. եօ.

հողի—հողեակ. որդի—որդեակ. աղաւնեակ, եօթնեակ...

Արուսեակը շատ աշխատասէր աղջիկ էր. իրանց դա-
ստանը նա ունէր եօթն ընկերուհի. նրանց անուններն
էին՝ Սրբուհի Մամիկոնեան, Մաթենիկ Արամեան, Վար-
դուհի Պարոնեան, Պերճանուշ Պոօշեան, Մանուշակ Պատ-
կանեան, Սիրանոյշ Աղայեան, Լուսիկ Արծրունի: Իսկ
Արուսեակի ազգանունը Ղևոնդեան էր:

ԱՄԲՈՂԶ ԱՅԲՈՒԲԵՆԸ

ա, բ, գ, դ, ե, զ, լ, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ,
հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ու, ս, վ,

ա, բ, գ, լ, փ, ք, ա, օ, ֆ.

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, Ի, Լ, Խ, Ծ, Կ, Զ,
Հ, Ժ, Մ, Յ, Ն, Շ, Ո, Զ, Պ, Զ, Ռ, Ս, Վ, Տ, Ր, Ց, Ի,

Փ, Բ, Օ, Ֆ.

Ամբողջ ապրիլն էր.

ա, բ, գ, դ, ե, զ, լ, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ու, ս, վ,

դ, ե, լ, խ, ն, շ, ո, չ, պ, ջ, ու, ս, վ, փ, ք, ա, օ, ֆ,

փ, ք, ա, օ, ֆ.

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, Ի, Լ, Խ, Ծ, Կ, Զ,

Հ, Ժ, Մ, Յ, Ն, Շ, Ո, Զ, Պ, Զ, Ռ, Ս, Վ, Տ, Ր, Ց, Ի,

Փ, Բ, Օ, Ֆ.


Փ, Բ, Օ, Ֆ.

Բառ. խօսք.


բառ՝ հաց. ջուր. գիրք. հող. մատիտ. տիկնիկ...
խօսք՝ հացը ուտելիք է. ջուրը խմելիք է.
հողը խաղալիք է. գիրքը դասի առարկայ է.
մատիտը... տիկնիկը... սուրճը... փլաւը...



աշակերտ. ուսուցիչ. դերձակ.
երկրագործ.
Աշակերտը կարդում է. ուսուցիչը
կարդացնում է:
Դերձակը կարում է. երկրագործը
վարում է:




կով. ձի. շուն. կատա.
առիւծ:
Կովը բառաչում է. առիւ-
ծը մոնչում է:
Ջին խրխրնջում է. շունը
հաջում է:
Կատուն մլաւում է. աքա-
ղաղը կանչում է:



Ա ք ա ղ ա ղ

Դու ինձ ասան, աքաղաղ,
Ոսկէ կատարիդ մատաղ,
Կարմիր մերուքիդ մատաղ,
Ինչի՞ ես շուտարթնանում,
Բարձր-բարձր երգ ասում,
Անուշ քունս խանգարում:



ոչխար. առիւծ. սոխակ, խոզ.
 ոչխարը խոտակեր կենդանի է.
 առիւծը մսակեր գազան է.
 խոզը ամենակեր կենդանի է.



Գայլը և գառը

Սարի լանջով առուակ էր վազում: Գառը մօտեցաւ, որ ջուր խմէ: Գայլը տեսաւ վերեւից և ձայն տուաւ. «է՛յ, դժւ, ի՛նչու ես ջուրս պղղտորում»:

— Ես ներքին եմ կանգնած, տէր իմ, իսկ դու վերին ես. ի՛նչպէս կարող եմ ջուրդ պղտորել:

«Ուրեմն ես սուտ եմ ասում, բարկացաւ գայլը. անպիտան, դու համարձակու՞մ ես ինձ հակաճառել», ասաց գազանը և պատառոտեց գառնուկին:



Երկու առարկայ մի խօսքի մէջ.

Հովտում կանգնած էր մի տանձի ծառ:

Ծառի վրա կային պտուղներ:

Ծառի տակ նստած էր հովիւր:

Գառների մօտ նստած էր շունը:

Ծառի շուրջը արածում էին գառները:

Ծառի վերեւ թռչոտում էին թռչունները:

Ոստի վրա նստած էր մի ագռաւ:

և—ու

Ես գնում եմ դպրոց:
 Դու գնում ես դպրոց:
 Ես և դու գնում ենք դպրոց:
 Ես ու դու գնում ենք դպրոց:

Գառնուկ

Իմ սիրուն գառնուկ,
 Իմ անմեղ գառնուկ,
 Բուրդըդ սպիտակ է.
 Բուրդըդ փափուկ է.
 Դու դաշտ ես վազում.
 Դու արօտ ես վազում.
 մօրըդ կարօտն ես քաշում:
 Միրական գառնուկ,
 լաց մի լինիր փոքրիկ տղի նման.
 մայրըդ կըգայ,
 քեզ համար անուշ կաթ շատ կըբերէ:

Միրուն, անմեղ իմ գառնուկ,
 Բուրդըդ սպիտակ ու փափուկ,
 Դաշտ վազելով ու արօտ,
 Մօրըդ քաշում ես կարօտ:
 Մի լար, գառնուկ սիրական,
 Փոքրիկ տղի դու նման.
 Կըգայ մայրըդ, հետը շատ
 Կըբերէ քեզ անուշ կաթ:

Իսկ. բայց

Վարդանը գնում է, իսկ Շուշանիկը գալիս է:
 Հայկը գրում է, իսկ Հայկանուշը կարում է:
 Ծառը ծաղկում է, բայց պտուղ չի տալիս:
 Արմիկը նկարում է, բայց վատ է նկարում:

Թէ-եթէ

Կատուն մեռաւ, ափսոս ու ան,
 Մկներն այսօր խիստ են ուրախ.
 Եթէ յանկարծ վեր-կենայ սաղ,
 Նրանց կանէ արիւն-շաղախ:



Վատ ընկերը

Էջն ու շունը ճանապարհ էին գնում: Մի խոտաւէտ տեղ կանգնեցին: Էջն սկսեց արածել խոտը. շունը ուտելու բան չունէր:

— «Խուրճինդ լիքն է հացով. մի կտոր ինձ տուր, խնդրեց շունը. սոված մեռնում եմ»:

— «Չեմ տալ. ես խոտ եմ ուտում, դու էլ խոտ կեր, պատասխանեց էջը»:

— «Ես խոտակեր չեմ, ընկեր. հաց եմ ուզում»:

— «Չեմ տալ, կրկնեց էջը»:

Այդ միջոցին թփերի ետեից երևեցաւ գայլը, էջի թշնամին:

էջը վարհուրեց. «Ընկերս, աղաչեց նա. առ, քեզ լինի բոլոր հացը, կեր, անուշ արան. միայն թէ ազատիր ինձ գայլի ատամներից»:

Ջունը երեսը շուռ տուեց և հեռացաւ. «Եթէ իմ ընկերս լինէիր, ես քեզ կը պաշտպանէի», ասաց նա:

Գայլը մի բուլէում պատառուտեց էջին:

արածել — արածացնել. ուտել — ուտացնել.

խոտակէտ, հոտակէտ — շատ խոտ տուող. լաւ հոտ տուող. սոված եմ, ծարաւ եմ — քաղցած եմ. խմել եմ ուզում.



Սոխակը երգող թռչուն է:

Ծիծեռնակը երգող թռչուն է:

Սոխակը և ծիծեռնակը երգող թռչուններ են:



Մ ե Ր տ ու ն ը

Մեր տունը մեծ չէ. նա երեք սենեակ ունի և մի խոհանոց: Սենեակներից մէկում մենք դաս ենք սովորում. երկրորդ սենեակում ճաշում ենք. նրա մէջ դարսած են շատ աթոռներ, մի մեծ սեղան և մի պահարան: Ամենից մեծ սենեակում մենք քնում ենք: Դա կոչւում է ննջարան:

Պատմեցէք, ինչ որ տեսնում էք մանկանոցում:

Տաութ թռչունիկին

Տօ-տան, տօ-տան՝

Ոտիկները շուտ-շուտ փոխի, բալն ջան.

Տօ-տան, տօ-տան՝

Տօտիկները ամառ կոխի, լալն ջան...

Տօ-տան, տօ-տան՝

Արի, արի, ինձ ձի արա, քեզ մատաղ.

Տօ-տան, տօ-տան,

Արի, մօրըդ պաշի արա, քեզ սահաղ... *)

Տօ-տան, տօ-տան՝

Հըրէս եկաւ իմ բալիկը վագելով,

Օ-խայ, ճ-խայ՝

Պաշի արաւ իմ շըրթունքը լիզելով:

Մեր դասատուներ

Դասատան մէջ նստած են աշակերտները: Աշակերտների առաջ նստած է վարժապետը: Վարժապետը սովորեցնում է: Աշակերտները սովորում են: Երբ-որ վարժապետը ներս է մտնում, աշակերտները ոտի են կանգնում և աղօթում են: Աշակերտները դասատանը կարգում են, գրում են, հաշւում են թւերով, երբեմն էլ նկարում են: Աշակերտների գիմացը դրած է մի մեծ գրատախտակ: Գրատախտակի մօտ դրած է կաւիճ և սպունգ: Գրասեղանների վրա դրած են դասական առարկաներ:

*) Բալա ջան-դաւակս. լալա ջան-ճաղիկս. ձի արա — գրիկը. քեզ մատաղ, քեզ սահաղ՝ նոյն նշանակութիւնն ունին:

Հրաւեր

Զանգը տըւին, դէհ, շատ արեք,

Խաղալիքներ մի կողմ դրէք.

Մի կողմ դրէք գընդակ, չըւան,


Խաղատիկին, հոլ, խարազան.


Մըտէք, մըտէք դուք դասատուն.

Իսկոյն կըգայ ձեր դասատուն:

Մեր ընտանիքը

Ես մի փոքրիկ երեխայ եմ: Ես ունիմ հայր ու մայր: Հայրս ու մայրս ինձ շատ են սիրում: Ես երկու քոյր և մի եղբայր էլ ունիմ: Ծնողքս նրանց էլ են շատ սիրում: Հայրս ու մայրս մեզ կերակրում են: Նրանք մեզ պահում-պահպանում են: Մենք շատ ենք սիրում մեր ծնողներին և նրանց պատուէրները կատարում ենք:





Պատմեցէք, ինչ որ տեսնում էք այս պատկերի վրայ.

Ազգակիցներ

Ես ունիմ հայր ու մայր. նրանք իմ ծնողներն են:


Հօրս հայրը իմ պապն է—իմ մեծ հայրը:

Մօրս մայրը իմ տատն է—իմ մեծ մայրը:

Հայրս մի եղբայր ունի, նա իմ հէրբարն է.—
հէրբար-հօրեղբայր:

Մայրս էլ մի եղբայր ունի, նա իմ քեռին է.—
քեռի-մօրեղբայր:

Երեկ հօրաքոյրս ու մօրաքոյրս տարան ինձ
իրանց տուն: Հօրաքոյր-հօրքիր, մօրաքոյր-մօրքիր:



Փիղն ու բօթօթը

Քաղաքի փողոցներով ման էին ածում մի
փիղ: Մարդիկ նայելու էին դուրս եկել: Փոքրիկ
շնիկը տեսաւ փիղին և սկսեց նրա վրայ հաջել:

— Ի՞նչու ես հաջում, հարցրեց գամփուր. չը-
լինի թէ ուզում ես վախեցնել փղին:

— 2է, միտքս այդ չէ. ես հաջում եմ, որ
մարդիկ ասեն. «Տեսէ՞ք՝ ի՞նչքան քաջ է մեր
քօթօթը, որ փղի դէմ էլ հաջում է»:

Հ Ա Յ Ր Մ Ե Ր

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի ա-
նուն Բո. եկեսցէ արքայութիւն Բո. եղիցի կամք
Բո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանա-
պազդորդ տնւր մեզ այսօր. թո՛ղ մեզ զսլարախ
մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապա-
նաց. և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ
փրկեա՛ն զմեզ ի չարէ, զի Բո է արքայութիւն, և՛
զօրութիւն, և՛ փառք այժմ և յաւիտեան:



ՀՀ Ազգային գրադարան



NL0243424

9815

9815
9815

115

20467.